



Միջին հայրենակիցներ,

Մենք կոչ ենք անում առաջիկա արտահերթ խորհրդարանական ընտրություններին ձեր ձայնը տալ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությանը, քանի որ.

- ✓ Մենք գիտենք ինչպես դուրս բերել Հայաստանի Հանրապետությունը տնտեսական, սոցիալական ներկա ճգնաժամից և ապահովել մեր երկրի ու ժողովրդի անվտանգությունը
- ✓ Մեզ անհրաժեշտ է հանրային լայն աջակցություն
- ✓ Մենք գնում ենք հաղթելու և իրականություն դարձնելու մեր ծրագրերն ու խոստումները:

Մեր ծրագրային առաջնահերթ հիմնադրույթներն են.

1. Մեր հանրապետությունում նվազագույն աշխատավարձը մշտապես պետք է ավելի բարձր լինի, քան նվազագույն սպառողական զամբյուղն է: Այն մեր հայրենակիցների համար պետք է ապահովի արժանապատիվ կենսամակարդակ:

Աշխատանքային կենսաթոշակը պետք է երաշխավորի կենսաապահովման նվազագույն պայմաններ, իսկ թոշակներն ու աշխատավարձերը գնաճին համընթաց պարբերաբար պետք է ինդեքսավորվեն:

Առաջիկա 5 տարիների ընթացքում՝ յուրաքանչյուր տարի, առնվազն 10%-ով պետք է բարձրացնել նվազագույն աշխատավարձը և թոշակները:

Թոշակների և աշխատավարձերի բարձրացումը պետք է ապահովվի կանխատեսելի ու անհրաժեշտ ծավալի ամենամյա ներդրումային ծրագրերի իրականացմամբ, որն էլ իր հերթին կապահովի պետական բյուջեի հարկային մուտքերի ակնկալվող չափի ավելացում:

Այսպիսով՝ համակողմանի խթանող համակարգի միջոցով ներդրումների ներգրավմամբ միայն կարելի է հասնել իրական աշխատավարձերի բարձրացման:

2. Հաշվի առնելով հանրապետության ողջ տարածքում (մարզեր, համայնքներ) դեռևս խորհրդային տարիներից ձևավորված գյուղատնտեսական ու արտադրական մասնագիտացման, կոոպերացման հիմնական ուղղությունները՝ անհրաժեշտ է մշակել տնտեսական բոլոր ոլորտների զարգացման գերակայություններ՝ հիմքում ունենալով նոր, բարձրակարգ թվային տեխնոլոգիաներ և ծառայություններ, բարձր արտադրողական աշխատատեղերի ստեղծում, ժամանակակից մեքենատրակտորային կայաններ ու սարքավորումներ:

Համապատասխան զարգացման ծրագրեր պետք է մշակվեն Հայաստանի Հանրապետության բոլոր 10 մարզերի համար:

3. Հրատապ պետք է մշակել և իրականացնել նոր տնտեսական քաղաքականություն, որի հիմքում պետք է դրվի ներդրումային, այլ ոչ թե սպառողական տնտեսությունը: Պետք է ապահովել աշխատանքի արտադրողականության կտրուկ աճը տնտեսության իրական հատվածում:

Առաջիկա 5 տարիների ընթացքում ներդրումներ-ՀՆԱ հարաբերակցությունը կտրուկ պետք է աճի՝ հասնելով առնվազն 40%-ի:

Գործողության մեջ պետք է դրվի ներդրումների ներգրավման «մեկ պատուհան» սկզբունքը:

4. Անհրաժեշտ է մշակել, ինչպես նաև իրականացնել արտահանման համալիր խթանման պետական հատուկ ծրագիր, այդ թվում՝ յուրաքանչյուր մարզում և համայնքում պետք է ձևավորվեն ապրանքների, գյուղմթերքների ընդունման և մթերման ժամանակակից կայաններ՝ հագեցած տարայավորման, փաթեթավորման սարքավորումներով, սառնարանային և պահեստային տնտեսություններով: Ապրանք արտադրողը պետք է համոզված լինի, որ մենք ունենք ապրանքների իրացումն ապահովող իրական համակարգ: Պետությունը պարտավոր է ապահովել այն ապրանքների և գյուղմթերքների անխափան իրացումը, որոնք ունեն բարձր սպառողական պահանջարկ և ընդհանուր առմամբ ներառված են ՀՀ կառավարության կողմից սահմանված առաջնահերթությունների շրջանակում:
5. Մեր երկրի հարյուր հազարավոր քաղաքացիների համար լրջագույն խնդիր է տարեցտարի փոխանցվող վարկային բեռը, որի հաղթահարումն անհնար է դառնում: Հազարավոր մարդիկ կանգնած են սեփական օթևանը կորցնելու վտանգի առջև:

Հատկապես այս ամենը վերաբերում է սպառողական և գյուղատնտեսական վարկերին, որոնց տոկոսները, տույժ ու տուգանքները հաճախ մի քանի անգամ գերազանցում են մայր գումարի չափը:

Հանրապետությունում կա շուրջ 2.2 միլիոն վարկառու, որոնց վարկային պարտավորությունների ընդհանուր չափը 4 տրիլիոն դրամ է, որից մոտ 1 տրիլիոնը սպառողական վարկեր են: Ահռելի գումար են կազմում նաև գյուղատնտեսական վարկերը: Մենք գտնում ենք, որ ժամանակն է մեր վարկառու հայրենակիցներին «ազատելու» վարկերի այդ անարդար բեռից, որպեսզի նրանք չկորցնեն իրենց ունեցվածքը: Այսպես՝ մինչև 3 մլն դրամի չափով վարկերը պետք է զրոյացնել: Արդյունքում՝ շուրջ 2.2 մլն վարկառուներից մոտ 2 մլն վարկառուների վարկերն ամբողջությամբ կմարվեն: Գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքն այսուհետ չպետք է գերազանցի 2-3%-ը:

Արտահերթ խորհրդարանական ընտրություններից անմիջապես հետո պետք է վերաբացվի Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը:

Պետությունը համեմատաբար խոշոր ներդրումային ծրագրերի աջակցման նպատակով այս գործընթացներում կարող է 25-30%-ով մասնակցություն ունենալ՝ ապահովելով առաջիկա 3-5 տարիների ընթացքում ապրանքների և ծառայությունների կայուն իրացումը:

Բիզնեսի կայացումից հետո պետական կառույցը կարող է վաճառել իր բաժնեմասը սվյալ ձեռնարկատիրոջը:

6. Ջրային տնտեսության կառավարման համակարգն անհրաժեշտ է արմատապես վերակառուցել՝ բացառելով ներկայումս գործող միջնորդ-շղթայական օղակները, որի արդյունքում էապես կիջնի գյուղացիական տնտեսություններին մատակարարվող ոռոգման ջրի ինքնարժեքը, ջրամատակարարների և ջրօգտագործողների միջև կձևավորվեն վստահելի հարաբերություններ: Ուստի, 2021 թվականի սեպտեմբերի 1-ից առաջիկա 3 տարիներին գյուղացիական տնտեսությունների համար 1հա հողամասի ոռոգման ջրի դիմաց վճարը կսահմանվի 1000 ՀՀ դրամ:
7. Հայաստանը վերստին պետք է դառնա արդյունաբերական երկիր: Հատուկ ձևավորված արդյունաբերական գոտիներում պետք է ստեղծվեն բարենպաստ հարկային, վարկային և արտադրական պայմաններ:
8. Մեր հանրապետությունում նորովի պետք է զարգանա էներգետիկան, այդ թվում՝ ատոմային էներգետիկան: Հայտնի է, որ 2026 թվականին ավարտվելու է Հայկական ատոմային էլեկտրակայանի ռեսուրսը: Սակայն առկա են այնպիսի ռիսկեր, որոնք 2026 թվականից հետո կարող են խնդիրներ առաջացնել կայանի գործունեության ժամկետի հետագա երկարաձգման համար: Ուստի, անհրաժեշտ է Ռուսաստանի Դաշնության մեր գործընկերների հետ սկսել նոր բանակցություններ՝ առավել ժամանակակից ատոմակայանի կառուցման և շահագործման համար:

9. Հաշվի առնելով այն, որ սպառողների համար գազի և էլեկտրաէներգիայի սակագինը սահմանում է պետությունը, նաև այն, որ սահմանին 1000մ³ գազը մատակարարվում է 165 ԱՄՆ դոլարով, իսկ էլեկտրաէներգիայի շուրջ 65%-ն արտադրում են ՀԱԷԿ-ը և հիդրոէլեկտրակայանները, առնվազն 10%-ով պետք է իջեցնել գազի և էլեկտրաէներգիայի սակագինը:
10. Պետք է գնալ ընդհանուր հարկային բեռի թեթևացման ճանապարհով՝ սահմանելով եկամտային հարկի պրոգրեսիվ սանդղակ գործող համահարթի փոխարեն, զուգահեռաբար փոփոխելով ընդունված անհասկանալի գույքահարկի մասին գործող հարկային կարգավորումները, ինչպես նաև սահմանելով մինչև 12 մլն դրամ շուկայական արժեք ունեցող անշարժ գույքի գույքահարկի զրոյական սոկոսադրույք:
11. Փոքր և միջին ձեռնարկությունների նկատմամբ չպետք է իրականացվի որևէ ավելորդ հարկային վարչարարություն: Նրանց պետք է հանգիստ թողնել:

Միաժամանակ պետական ծրագրերի և պետական գնումների շրջանակում ՓՄՁ-ներին պետք է առաջնահերթություն տալ: Փոքր բիզնեսը պետք է հնարավորություն ունենա դառնալու միջին, իսկ հետագայում միջինը՝ խոշոր:
12. 2021 թ. սեպտեմբերի 1-ից կտրուկ նվազեցնել արագաչափերի և տեսախցիկների տուգանքների չափը: Վերացնել ճանապարհային երթևեկության գործող բալային համակարգը:
13. Այսօր, առավել քան երբևէ, վճռորոշ նշանակություն ունի հայ-ռուսական հարաբերությունների կայուն և դինամիկ զարգացումը: Ձևավորման սկզբնական փուլից առ այսօր «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը գտնում է, որ որպես Հայաստանի Հանրապետության անվտանգության երաշխավոր՝ Ռուսաստանի Դաշնության ներկայությունը մեր երկրում պետք է հասնի առավելագույն մակարդակի: Հատկապես մեր հայրենիքի համար հետպատերազմական այսօրինակ ծանր ժամանակաշրջանում նշված գործընթացը կարևորագույն առաջնահերթություն է: Այս համատեքստում անհրաժեշտ է Ռուսաստանի Դաշնության հետ նոր ռազմաքաղաքական պայմանագրի կնքումը: Հայաստանի

Հանրապետությունը Ռուսաստանի Դաշնության հետ երկկողմ և բազմակողմ հարաբերությունների շրջանակում պետք է վարի իր ռազմավարական դաշնակցի համար վստահելի քաղաքականություն:

14. Մեր գերնպատակն է Արցախի ժողովրդի անվտանգության ապահովումը և Արցախի Հանրապետության միջազգային ճանաչումը՝ վերականգնելով նախկին ԼՂԻՄ-ի սահմաններով տարածքային ամբողջականությունը: Ղարաբաղյան հիմնախնդիրը պետք է հանգուցալուծվի բացառապես խաղաղ, բանակցային ճանապարհով:
15. Հրատապ պետք է մշակել և կյանքի կոչել Հայոց ազգային բանակի վերականգնման և վերազինման համալիր ծրագիր: Մշակված պետական ծրագրով Հայաստանի Հանրապետության ազգային բանակը կարճ ժամանակահատվածում պետք է համալրել վերջին սերնդի զենքով և զինամթերքով: Հնարավորինս կարճ ժամկետում պետք է ձևավորել պրոֆեսիոնալ բանակ, որը կլինի տեխնիկապես գերհագեցած: Մասնավորապես՝ նորարարական տեխնոլոգիաների ներդրումը և արդյունավետ շահագործումը ՀՀ զինված ուժերում պետք է դարձնել թիվ մեկ առաջնահերթություն և նպատակ, իսկ մինչ այդ իրագործել անձնակազմի կառուցվածքային արդիականացում՝ առաջնագծում ծառայություն սահմանելով միայն փորձառու պայմանագրային ծառայողների համար:
16. «Բարգավաճ Հայաստանը» կարևորում է Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) շրջանակում Հայաստանի Հանրապետության բազմավեկտոր ինտեգրման ընդլայնումը: Միաժամանակ ԵԱՏՄ-ն Հայաստանի համար պետք է դառնա ոչ միայն ապրանքների և ծառայությունների իրացման մեծ շուկա, այլև դեպի Հայաստանի Հանրապետություն ներդրումների ներհոսքի կարևորագույն աղբյուր: Մենք շարունակաբար մեր ակտիվ մասնակցությունն ենք ունենալու ԱՊՀ և ՀԱՊԿ կառույցներում ընթացող գործընթացներին՝ շարունակելով կառուցողական գործունեությունը եվրասիական գործընթացներում:
17. Դատաիրավական բարեփոխումները սեղմ ժամկետում պետք է ապահովեն դատական համակարգի լիակատար անկախությունը:

18. Կորոնավիրուսային համավարակի պայմաններում պետությունը պետք է ժամանակին և հասցեական բժշկական օգնություն տրամադրի մեր հայրենակիցներին ինչպես ստացիոնար, այնպես էլ տնային բուժման պայմաններում: Բուժօգնությունը, սկսած թեստավորումից մինչև անհրաժեշտ բուժման գործընթացի ավարտը, պետք է իրականացվի պետական բյուջեի միջոցների հաշվին:

Անհրաժեշտ է վերանայել նաև առողջապահության ոլորտում պետական պատվերի տրամադրման կարգը. զինժառայողներին, Արցախյան պատերազմում զոհվածների, անհետկորածների, պատերազմի հետևանքով հաշմանդամ դարձած անձանց ընտանիքներին, սոցիալապես անապահով խավերին և օրենքով սահմանված այլ շահառուներին տրամադրել իրենց հասանելիք բժշկական հավատարմագրումը: Պետական պատվերի համակարգն ամբողջապես պետք է հավատարմագրել:

18.1 Բժշկական որակի գնահատման և վերահսկման համակարգի ներդնում, բժշկական կազմակերպությունների օրենդրական դասակարգում և դրա հիմքով բժշկական կազմակերպությունների ֆինանսավորման նոր և արդարացի մոտեցումների կիրառում:

18.2 Բուժաշխատողների մասին ՀՀ օրենքի ստեղծում՝ բուժաշխատողների սոցիալական, իրավական և մասնագիտական երաշխիքների համակարգերի ընդգրկմամբ, այդ թվում բուժաշխատողի մասնագիտական գործունեության ռիսկի ապահովագրության համակարգի մեկնարկով:

19. Առաջիկա մեկ տարվա ընթացքում աղետի գոտու ՀՀ ոչ մի քաղաքացի չպետք է ապրի ժամանակավոր կացարանում:

20. Ժամանակակից տնտեսության զարգացման շարժիչ ուժն ուժեղ և դինամիկ զարգացող հիմնարար և կիրառական գիտությունն է:

Անհրաժեշտ է տարեցտարի ավելացնել գիտության ֆինանսավորումը՝ առաջիկա 3 տարում այն հասցնելով ՀՆԱ-ի 1.5%-ի: Բարձր տեխնոլոգիական գիտական արդյունքներ ապահովող գիտահետազոտական ծրագրերը պետք է իրականացվեն առաջանցիկ ֆինանսավորմամբ: Մեր հանրապետության

բարձրագույն ուսումնական հաստատություններում պետք է ձևավորվեն նաև բարձրակարգ գիտական և հետազոտական կենտրոններ:

21. Գիտելիքներ և բարձր առաջադիմություն ունեցող ոչ մի ուսանող ուսման վարձը չվճարելու պատճառով չպետք է զրկվի կրթություն ստանալու իրավունքից:
Երիտասարդությունը մեր ապագան է: Պետության խնդիրն է ապահովել երիտասարդ սերնդի՝ ժամանակակից և որակյալ կրթություն ստանալու, մրցունակ մասնագետ դառնալու և բարձր վարձատրվող աշխատանք ունենալու իրավունքը:
22. Մեր հայրենակիցների, հատկապես երիտասարդ ընտանիքների արժանապատիվ կենսաապահովման նպատակով պետությունը պետք է իրականացնի սոցիալական բնակարանաշինության ծրագրեր: Այդ նպատակով տեղական ինքնակառավարման մարմինները պետք է կատարեն անհրաժեշտ հողհատկացումներ: Նորակառույց շենքերում բնակարանները պետք է հատկացվեն լիարժեք վերանորոգված 1մ² համար 180 հազար դրամով կամ 60մ² բնակարանները՝ մոտ 20-22 հազար ԱՄՆ դոլարին համարժեք դրամով: Շահառուներն առանց կանխավճարի ձեռք բերված գույքի ամսական մարումները կկատարեն 10 տարվա ընթացքում:
23. Պետությունը հատուկ հոգածություն պետք է ցուցաբերի բազմազավակ, միայնակ, հատուկ կարիքներ ունեցող մայրերին, բազմազավակ ընտանիքներին, Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքներին և վիրավորներին՝ յուրաքանչյուր տարի ավելացնելով նրանց տրամադրվող ֆինանսական, այլ օժանդակության ծավալները: Անհրաժեշտ է հատուկ օգնություն ցուցաբերել պատերազմի հետևանքով տեղահանված արցախցիներին:
24. Պետությունը սեղմ ժամկետներում պետք է վթարային շենքերում ապրող մեր հայրենակիցներին նույն համայնքում ապահովի բնակարաններով և անմիջապես ամրագրի սեփական պարտավորությունը՝ քաղաքացիների հետ կնքելով համապատասխան պայմանագրեր:

Ողջամիտ ժամկետներում անհրաժեշտ է լուծում տալ հանրային գերակա շահ ճանաչված տարածքների բնակիչների խնդիրներին՝ նրանց առաջարկելով համարժեք բնակարաններ, կամ համարժեք փոխհատուցում՝ դրանց ապահովման համար պետության անունից քաղաքացիների հետ կնքելով համապատասխան պայմանագրեր:

25. Մեկ տարվա ընթացքում հանրապետության բոլոր բնակավայրերն ապահովել մարզադպրոցներով, որոնք հարմարեցված կլինեն նաև հատուկ կարիքներ ունեցող անձանց համար:

26. Հայաստանի Հանրապետության մշակութային քաղաքականության հենքը պետք է լինեն հոգևոր և ազգային ավանդույթների պահպանման վրա հիմնված ժամանակակից մշակութային միջավայրի ձևավորումը, մրցունակ մշակութային արժեքների ստեղծումը, ինչպես նաև մեր հարուստ պատմամշակութային ժառանգության պահպանումը:

Պետությունն իր հիմնարար խնդիրներից մեկը պետք է համարի օրենսդրական համապատասխան դաշտի ձևավորմամբ ազգային մշակույթի դերի արժևորման և զարգացման նպաստավոր պայմանների ստեղծումը:

27. Սփյուռքը Հայաստանի անբաժանելի մասն է, մեր պետության զարգացման կարևորագույն գործոնը: Այսօր, առավել քան երբևէ, անհրաժեշտ է ճիշտ գնահատել Սփյուռքի ներուժը և ապահովել Սփյուռքի մասնակցությունը համազգային ծրագրերի իրականացման գործում:

Հայաստանը պետք է դառնա ողջ հայության միավորման, մեր հավաքական կարողությունների ու ներուժի իրացման կենտրոն: Մենք անելու ենք առավելագույնը՝ Սփյուռք-հայրենիք համատեղ օրակարգի մշակման և հայրենաշինության գործում Սփյուռքի առավել ակտիվ ներգրավման ու մասնակցության ապահովման համար:

28. Մենք հետևողականորեն հանդես ենք գալիս Հայոց ցեղասպանության դատապարտման և միջազգային ճանաչման գործընթացի շարունակականության օգտին:

29. Հանրապետությունում ստեղծված ներկա բարդ իրավիճակում ոչ միայն պետք է ջանքեր գործադրել արտագաղթը կանխելու ուղղությամբ, այլև իրականացնել մեծ հայրենադարձության կազմակերպման միջոցառումների համալիր ծրագիր: Անհրաժեշտ է երկրից հեռացած և իրենց օթևանները կորցրած մեր հայրենակիցներին վերադարձի դեպքում անվճար տրամադրել հողատարածք՝ բնակարանները 30 տարով չօտարելու պայմանով տներ կառուցելու համար:
30. Սահմանամերձ համայնքների անվտանգությունն ու զարգացումը պետք է լինի պետության կարևորագույն առաջնահերթությունը: Այդ համայնքներում առաջիկա երկու տարիների ընթացքում պետք է ավարտին հասցնել անհրաժեշտ բոլոր ենթակառուցվածքների շինարարությունը: Սահմանամերձ ու սահմանապահ համայնքներին պետք է տրամադրվեն լայն արտոնություններ:

Միրելի՛ հայրենակիցներ,

Այսօր Հայաստանի Հանրապետությունը հայտնվել է պայթյունավտանգ, բարդ, համալիր ճգնաժամի պայմաններում: 2020թ. կորցրել ենք Արցախի Հանրապետության տարածքի մեծ մասը, ցավոք, կորցնում ենք նաև Հայաստանի Հանրապետության սահմանամերձ որոշ տարածքներ, վտանգված է մեր հարավային դարպասը՝ Սյունիքը: Արցախը վիրավոր է...



Հապաղելը կարող է տանել պետության կորստի: